

Ծածկագիր

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB

Շարադրանք

Ծրագրավորման մրցույթի մասնակիցները պետք է ստանան ծածկագրեր: Ծածկագրերը պետք է բավականաչափ բարդ լինեն, որ մրցույթի մասնակիցները չփորձեն գուշակել մյուսների ծածկագրերը: Մյուս կողմից լրիվ պատահական սիմվոլներից գեներացված ծածկագրերն էլ վատ են նրանով, որ մասնակիցները դրանք հավաքելուց կարող են խնդիրներ ունենալ: Ժյուրին որոշել է պահել վանկերի զանգված, գեներացնել պատահական ինդեքսներ: Ձեր խնդիրն է օգնել ժյուրիին, գրել ծրագիր, որը վանկերի զանգվածի և պատահական ինդեքսների միջոցով գեներացնի և արտածի ծածկագրերը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է վանկերի m ($1 < m < 50$) քանակը, որին հաջորդում են m տողեր, յուրաքանչյուրում մի վանկ: Վանկերը բաղկացած են մինչև 5 սիմվոլներից և դատարկ սիմվոլներ չեն պարունակում: Հաջորդ տողում տրված է ծածկագրերի n քանակը ($1 < n < 200$): Հաջորդ n տողերից յուրաքանչյուրը պարունակում է հերթական ծածկագրի համար գեներացված պատահական ինդեքսների հաջորդականություն: Յուրաքանչյուր տողում նախ տրված է ինդեքսների k քանակը ($1 < k < 10$), որին հաջորդում են k հատ պատահական ինդեքսներ: Երաշխավորվում է, որ ինդեքսները տրված են $[0 \dots m-1]$ հատվածից:

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել n տող, յուրաքանչյուրում գեներացված հերթական ծածկագիրը:

Օրինակ

Մուտք	Ելք
4 an bar doh mu 2 4 0 0 0 0 2 3 1	anananan mubar
2 a r 1 10 0 1 1 1 1 1 1 1 1	arrrrrrrrr